

դած են յուզումնալից ու տրամադրիկ անցքերու, կ'ողբայ հինաւուրց եւ վեհափառ աւերակները, կ'ողբայ հայ զանգուածներու թըշուառութիւնն ու տառապանքը, թիւրք-քրդական կրկնակի լուծին տակ... եւ երբեմնապէս կ'արձակէ իր սեփական տառապանքի ճիւղ Մոսկուայի «Հիւսիսափայլ»ին մէջ:

Յիշելով թէ ինչպէս դեռ հինգերորդ դարուն մէջ հայ երիտասարդները կ'երթային Աթէնք եւ քաղաքակրթութեան այլ կենդրոններ՝ իրենց ուսման ծարաւը յազեցնելու, նա կ'ըսէր խորունկ վշտով. Ա՛հ, եթէ այդպէս շարունակուէր հայոց կեանքը, եթէ չլինէին բարբարոսութեան իրարու յաջորդող հեղեղները — ի՛նչպիսի դրախտ պիտի դառնար մեր երկիրը, որքա՛ն բարձր պիտի լինէր մեր ժողովրդի քաղաքակրթութեան աստիճանն այսօր...:

Յակոբ Մելիք-Յակոբեանի առաջին դրական փորձերը թունդ յեղափոխական բնոյթ չունէին եւ արդէն յեղափոխական, «Կայծերեան» գրութիւններ չէր սիրեր «Հիւսիսափայլ»ի մէջ, որու խմբագրապետը, Ստեփաննոս Նազարեան, չափաւոր մարդ մըն էր, պահպանողական հայ-քրիստոնեայ մը, որ կը զուարճանար ֆրանսական մեծ յեղափոխութեան ծաղրանկարը տալով իր հանդէսի էջերուն վրայ:

Այնուամենայնիւ, Մելիք-Յակոբեան — Բաֆֆիի այդ սկզբնական մարդանքներէն իսկ՝ դուրս կը սողային հրեղէն լեզուակներ, ինչպէս հրարուխի խորունկ ծալքերէն մերթ ընթ մերթ փշալով վեր կը բարձրանան բոցեղէն թելերը:

Հիւսիսափայլի այդ շրջանին կը պատկանի եւ «Ձա՛յն տուր, ով Ծովակ»ը — եթէ չենք սխալիր, տպուած այդ հանդէսի մէջ 1858 թվականին — այդ գեղեցիկ, մեղամաղձոտ հիմներ, որ երգեցին այնքան սերունդներ եւ կ'երգեն դեռ այսօր ալ, խորհրդային Հայաստանի մէջ, ցած ձայնով անշուշտ, գաղտադողի, ինչպէս հին քրիստոնեաները կ'երգէին իրենց սաղմոսները սոորերկրեայ կատակոմքներում...:

«Ձա՛յն տուր, ով Ծովակ»ը... Հէք պանդուխտը, նստած Աղթամարայ սիրուն ծովի եզրին, կ'ողբայ իր երկրի դաժան ճակատագիրը, կ'երգէ ու կ'արտասուէ...

«Շարժեցէ՛ք գեփիւո՛ք ալիքը վէտ-վէտ, խառնեցէ՛ք զարտասու՛քս այս քրեքիս հետ:

Բայց միայն չի լար, չի հառաչեր, այլ եւ կարծես կը սփոփէ, կը յուսադրէ ինքզինքը, — եւ երգը իր վերջաբանի մէջ կայծերեան շունչ կ'առնէ արդէն.

«Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ
Եւ ամէն կողմից պանդուխտ հայ ազգիք
Դիմել դէպ' իւրեանց սիրուն հայրենիք»...

Եկա՛ւ այդ օրը: Բայց հայրենիքի հին ու երգուեալ ոստիները, նոր ու կարմիր Մերուս ժաններու առաջնորդութեամբ, փութացին վար դարնելու ստրկութեան անդունդներէն վեր մազլոյող փոքրիկ հսկան եւ վերստին խորտակեցին դարերու մեծ երազը...

(Շարունակելի)

